17
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
2019

Luys Լույս®

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԼԱՆԴՇԱՖՏԸ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԼԱՆԴՇԱՖՏԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՄ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՈՒՂԵՐՁԸ 1

ՖՐԱՆԳՄԵՆՏԱՎՈՐՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԱՆԴՇԱՖՏ 5

ՄՐՑԱՊԱՅՔԱՐԸ ԵՄ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ 6

ԻՆՉՊԵ՞Ս ԿՓՈԽԵՆ ՆՈՐ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ 10

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

9-րդ գումարման Եվրոպական խորհրդարանը պաշտոնապես սկսեց իր աշխատանքները հուլիս ամսից: Այն աշխարհի միակ վերպետական խորհրդարանն է, որն ուղղակիորեն է ընտրված և օժտված է այնպիսի իրավասություններով, ինչպիսիք են միասնական շուկայի կարգավորվումը և հանրային գումարի բաշխումը ԵՄ ընդհանուր բյուջեով: Հետևաբար եվրոպական ընտրությունները հանրային մեծ ուշադրություն են գրավում:

Այս տարվա ընտրությունների արդյունքները հստակ ուղերձ էին պարունակում, այն է՝ ԵՄ ընտրողները փոփոխություն են ուզում:

Ընտրությունների հիմնական արդյունքները ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է այն դիտարկել մի քանի տեսանկյունից: Եվ քաղաքական նոր իրավիճակը գնահատելիս առաջ են գալիս հետևյալ հարցադրումները.

Ինչպե՞ս կազդեն ընտրությունների արդյունքները խորհրդարանական կոալիցիաների ձևավորման վրա: Ի՞նչ նոր կուսակցական խմբեր կկազմավորվեն:

Ինչպե՞ս կփոխվեն քվեարկությունները խորհրդարանում նոր եվրոսկեպտիկ ուժերի ավելացմամբ:

Ո՞ր քաղաքական ուժերի ներկայացուցիչները կզբաղեցնեն ԵՄ կարևորագույն պաշտոնները:

Ինչպե՞ս կփոխվեն վարվող քաղաքականությունը և միջազգային հարաբերությունները:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՄ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Եվրոպական խորհրդարանի 751 տեղերը զբաղեցրել են շուրջ 190 տարբեր ազգային կուսակցություններ[1]:

[1] http://www.europarl.europa.eu/news/en/press-room/20190627IPR55404/constitution-of-the-9th-legislature-of-the-european-parliament

Լիսաբոնից մինչև Հելսինկի և Աթենք վերջին ընտրությունները արտացոլեցին արագորեն ֆրագմենտավորվող եվրոպական քաղաքական լանդշաֆտը: Միտումը հետևյալն է՝ մեծ կուսակցությունները որոշակիորեն զիջում են իրենց դիրքերը, փոքր կուսակցությունները՝ աստիճանաբար աճում:

Մայիսյան քվեարկության արդյունքում եվրոպամետները, իհարկե, հաղթանակ են տարել: Մասնակցությունն աճել է մինչև շուրջ 50,6%, վերջին երկու տասնամյակում սա ամենաբարձր տոկոսն էր (1994 թվականից ի վեր)[2], ինչը, իհարկե, լայն լեգիտիմություն է տալիս նոր խորհրդարանին, իսկ ընտրողների շուրջ երկու երրորդը աջակցում է եվրոպամետ կուսակցություններին, որոնք գլխավորում էին ընտրությունները 28 անդամ պետություններից 23-ում: Սակայն պետք է փաստել, որ թե՛ աջակենտրոն, թե՛ ձախակենտրոն հիմնական ավանդական կուսակցությունները կորցրին իրենց մանդատները՝ հօգուտ պոպուլիստների, լիբերալների և կանաչների: Առաջին անգամ կուսակցությունների երկու ամենամեծ դաշինքները միասին չեն կազմելու բացարձակ «հարմարավետ» մեծամասնությունը, որն ունեին 1979թ. առաջին եվրոպական խորհրդարանական ընտրություններից սկսած[3]:

Աջակենտրոն Եվրոպական ժողովրդական կուսակցությունը (ԵԺԿ) շարունակում է մնալ եվրոպական պրոտագոնիստ կուսակցությունը, որին հաջորդում են սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը և «Նորափոխել Եվրոպան» (նախկին «Եվրոպայի լիբերալների և դեմոկրատների ալյանս» (ALDE) + Մակրոնի «Վերածնունդ»): Չորրորդ տեղում են կանաչները՝ զգալիորեն բարելաված դիրքերով, որին հաջորդում են «Ինքնություն և ժողովրդավարություն»-ը և «Եվրոպական պահպանողականներ և ռեֆորմիստներ»-ը: Վերջին տեղում է «Եվրոպական միացյալ ձախեր/Սկանդինավյան ձախ կանաչներ»-ը:

2019թ. ընտրությունների արդյունքում ձևավորված ԵԽ-ի պատկերն ըստ քաղաքական խմբերի ներկայացված է 1-ին գծապատկերում:

[2] https://election-results.eu/turnout/
[3] http://www.europarl.europa.eu/about-parliament/en/in-the-past/previous-elections

Գծապատկեր 1. 2019-ին ձևավորված ԵԽ քաղաքական խմբերը



Այս գումարմանը ներկայացված են 7 քաղաքական խմբեր՝ մեկով պակաս, քան 8-րդ գումարման ժամանակ: Խորհրդարանում պատգամավորների շուրջ 61% -ը նոր է[4]: Առաջին լիագումար նստաշրջանի ընթացքում իտալացի սոցիալիստ Դավիթ Մարիա Սասոլին ընտրվեց ԵԽ նախագահ՝ 667 ձայնից 345-ով[5]: Երեք այլ թեկնածուներ ևս նոմինացված էին այդ պաշտոնին՝ Սկա Կելլերը՝ «Կանաչ» կուսակցությունից, Սիրա Ռեգոն՝ «Եվրոպական միացյալ ձախեր/Սկանդինավյան ձախ կանաչներ»-ից: Եվ Յան Զահիրադիլը՝ «Եվրոպական պահպանողականներ և ռեֆորմիստներ»-ից: Եվրոպական ժողովրդական կուսակցությունը՝ խորհրդարանի ամենամեծ քաղաքական խումբը, թեկնածու չէր առաջադրել:

Առաջին լիագումար նիստի ընթացքում ընտրվեցին նաև 14 փոխնախագահները:

Խորհրդարանի այս տեղաբաշխվածությունը հասկանալու համար պետք է հաշվի առնել, որ հետինդուստրիալ հասարակություններում աջակենտրոն և ձախակենտրոն կուսակցությունները վերջին տասնամյակների գերիշխանությունից հետո անկում են

[4] http://www.europarl.europa.eu/news/en/press-room/20190627IPR55404/constitution-of-the-9th-legislature-of-the-european-parliament
[5] http://www.europarl.europa.eu/news/en/press-room/20190627IPR55410/david-sassoli-elected-president-of-the-european-parliament

ապրել: ԵՄ քաղաքացիների մի մասը կորցրել էր վստահությունը ավանդական կուսակցությունների նկատմամբ և ավելի հակված էր ընտրելու նոր ուժերին, որոնք փոփոխություն էին խոստանում: Վարվող տնտեսական քաղաքականությունը, 2008թ. ֆինանսական ճգնաժամը, ինչպես նաև ԵՄ-ին սպառնացող հիմնական մարտահրավերները հարմար առիթ ստեղծեցին այսպես կոչված ուլտրակուսակցությունների՝ ծայրահեղ աջերի և արմատական ձախերի համար՝ գտնելու իրենց լսարանը Եվրոպական քաղաքական հարթակում:

Որոշ ընտրողներ գնացին քվեարկելու, քանի որ վախենում էին ԵՄ հնարավոր փլուզումից, կամ այն պատճառով, որ ուզում էին հստակ ուղերձ հղել քաղաքական առաջնորդներին՝ լուծումներ գտնելու կլիմայի փոփոխության և աճող ազգայնամոլության համար: Ընտրողների մյուս մասը ցանկանում էր վերականգնել ազգային ինքնիշխանությունը և լրջորեն անդրադառնալ փախստականների խնդրին:

Պոպուլիստական կուսակցությունները, օգտվելով այս ամենից, վերացրին կենտրոնամետ աջերի և կենտրոնամետ ձախերի տասնամյակներ շարունակվող գերակայությունը: Սակայն, չնայած գրանցած աճին՝ վերջիններս այնքան չեն ուժեղացել, որքան կանխատեսվում էր և որքան վախենում էին շատերը:

Հետաքրքրական է, որ եվրոսկեպտիկ ազգայնական կուսակցությունները հաղթել են ԵՄ 6 ամենաշատ բնակչություն ունեցող երկրներից 4-ում՝ Ֆրանսիայում («Ազգային համախմբում» կուսակցություն՝ Մարին լե Պենի գլխավորությամբ), Մեծ Բրիտանիայում («Բրեքսիթ»), Իտալիայում («Լիգա»՝ Մաթեո Սալվինիի գլխավորությամբ), Լեհաստանում («Իրավունք և արդարություն») [6]:

Ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիային, ապա վերջինս մասնակցեց ընտրություններին՝ չնայած ենթադրաբար պետք է լքեր ԵՄ-ն դեռ մարտին: Մեծ Բրիտանիայի խորհրդարանում փակուղի մտավ Բրյուսելում բանակցված ԵՄ-ից դուրս գալու մասին համաձայնագիրը, և Brexit-ի գործընթացը հետաձգվեց մինչև հոկտեմբեր, հետևաբար Մեծ Բրիտանիայի պատգամավորները լիարժեք մասնակցեցին ընտրություններին՝ չնայած անորոշ է, թե որքան ժամանակ նրանք կմնան Եվրոպական խորհրդարանում:

[6] https://election-results.eu/

ՖՐԱՆԳՄԵՆՏԱՎՈՐՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԱՆԴՇԱՖՏ

ԵԽ ընտրությունների արդյունքներով ԵՄ առաջնորդները բախվում են կարևոր մարտահրավերի, այն է՝ նոր, առավել մասնատված և բևեռացված քաղաքական միջավայրի ուղղորդումը:

Տարբեր շարժումներից, ասոցիացիաներից և այլ մանր կազմակերպություններից ծնված կուսակցությունները, անկախ քաղաքական սպեկտրում զբաղեցրած իրենց դիրքից, վտանգ են ներկայացնում նախկինում ԵԽ-ում առկա հիմնական կուսակցությունների համար:

Տեղին է առանձնացնել այն խնդիրները, որոնք առաջացել են ֆրագմենտացիայի հետևանքով: Առաջին կարևոր խնդիրը էական հարցերի շուրջ համաձայնության գալն է: Քանի որ կենտրոնամետ ուժերն այլևս բացարձակ մեծամասնություն չունեն, նշանակալի քվեարկությունների ժամանակ անհրաժեշտ կլինի համաձայնության հասնել ավելի մեծ թվով քաղաքական բլոկերի հետ:

Որոշ գործիչներ կարծում են, որ այս քաղաքական մասնատումը կվնասի ԵԽ աշխատանքներին, մինչդեռ մյուսները վստահ են, որ այն կատալիզատոր կդառնա ավելի արդյունավետ դեբատների համար, ինչն էլ կավելացնի հանրային հետաքրքրությունը ԵՄ մակարդակում քաղաքականության հանդեպ:

Սակայն մեծ տարբերություն կա մասնատվածության և առողջ բազմակարծության միջև: Այս մարտահրավերին դիմագրավելու համար ավելի մեծ քաղաքական ընտանիքները պետք է պատրաստվեն աշխատել այլ կուսակցությունների հետ, որոնց մի մասը շատ է ուժեղացել ազգային ներքաղաքական դաշտում՝ ընտրությունների արդյունքների շնորհիվ: Նրանք դա պետք է անեն՝ պահպանելով եվրոպական արժեքների ու քաղաքական մշակույթի անխզելի սահմանագծերը:

Նոր ԵԽ-ում մեծամասնության համար անհրաժեշտ է նվազագույնը 376 ձայն:

Այնպես որ, նույնիսկ եթե լիբերալ «Նորափոխել Եվրոպան» իր մանդատներով միանա աջակենտրոն կամ ձախակենտրոն դաշինքներին, դա բավարար չի լինի: Եվրոպական մայրաքաղաքում կանխատեսումներ են պտտվում այսպես կոչված հիպերկոալիցիայի ստեղծման մասին, որում կընդգրկվեն ԵԺԿ-ն, սոցիալիստները, լիբերալներն ու կանաչները, ինչն իհարկե մշտական բնույթ չի ունենա: Իսկ շատերի համար այն պարզապես կլինի գերիշխող էլիտայի կոնսենսուսի ընդլայնում և ստատուս-քվոյի քաղաքականության շարունակություն:

ՄՐՑԱՊԱՅՔԱՐԸ ԵՄ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ակնհայտ էր, որ ընտրություններից անմիջապես հետո անդամ պետությունների և քաղաքական խմբերի միջև սկսվելու էր ԵՄ հիմնական հաստատությունների ղեկավար պաշտոնների համար մրցապայքարը:

Իրականում ԵՄ գործադիր մարմնի ձևավորումը և հիմնական պաշտոնների բաշխումն իրականացվում է ազգային, աշխարհագրական, գենդերային և կուսակցական հավասարակշռության հիման վրա և ոչ միշտ է արտացոլում քաղաքացիների քաղաքական նախընտրությունը:

Կարևորագույն պաշտոններից է Եվրոպական հանձնաժողովի նախագահի պաշտոնը: Հուլիսի 16-ին Եվրոպական խորհրդարանը Ուրսուլա ֆոն դեր Լեյենին ընտրեց Եվրոպական հանձնաժողովի նախագահ: Նա առաջին կինն է, ով ստանձնում է այդ պաշտոնը[7]:

Ֆոն դեր Լեյենը նոմինացվել էր ԵՄ առաջնորդների կողմից՝ ծանր բանակցություններից հետո, չնայած նա Spitzenkandidat-ներից (գերմաներեն՝ «լավագույն թեկնածուն») մեկը չէր, որոնք նախընտրական քարոզչություն էին անցկացնում մայիսյան ընտրություններին ընդառաջ՝ ԵՄ գործադիր մարմինը ղեկավարելու համար: Spitzenkandidat-ի մեխանիզմը չօգտագործվեց հիմնականում Ֆրանսիայի ճնշման պատճառով: Իսկ Ֆոն դեր Լեյենը փոխզիջումային լուծում էր Փարիզի և Բեռլինի միջև, որը Գերմանիային վերջին գրեթե վեց տասնամյակում առաջին անգամ տվեց հանձնաժողովի նախագահությունը:

Գաղտնի քվեարկության արդյունքում ԵԽ պատգամավորներն աջակցեցին Գերմանիայի պաշտպանության նախարարին՝ ղեկավարելու ԵՄ գործադիր մարմինը: Նա կփոխարինի Ժան-Կլոդ Յունկերին, ով կավարտի իր պաշտոնավարումը հոկտեմբերի 31-ին:

ԵԺԿ թեկնածուն և Գերմանիայի կանցլեր Մերկելի մտերիմ գործընկերը հավաքեց 383 ձայն[8]՝ 9 ձայն ավելի, քան պահանջվում էր բացարձակ մեծամասնություն ապահովելու համար: Նրան չհաջողվեց կայուն մեծամասնություն

[7] https://ec.europa.eu/commission/interim_en
[8] http://www.europarl.europa.eu/news/en/press-room/20190711IPR56824/parliament-elects-ursula-von-der-leyen-as-first-female-commission-president

ունենալ, ինչը հնարավորություն կտար առաջիկա հինգ տարիների ընթացքում խորհրդարանում անցկացնել իր նախաձեռնությունները:

Ձայների հիմնական մասը Ֆոն դեր Լեյենը ստացավ ԵԺԿ, «Սոցիալիստների և դեմոկրատների պրոգրեսիվ ալյանս» և «Նորափոխել Եվրոպան» քաղաքական խմբերից: Նրան դեմ են քվեարկել 327 պատգամավորներ, որոնց թվում էին կանաչներն ու որոշ սոցիալիստներ: Նրանց դուր չէր եկել, որ ԵՄ առաջնորդները չեն հետևել նախապես որոշված Spitzenkandidat-ների ընթացակարգին: Բացի այդ, սոցիալիստները չէին համակերպվում այն փաստի հետ, որ իրենց թեկնածուն՝ Ֆրանս Թիմերմանսը մերժվեց այս պաշտոնի համար: Իսկ ահա կանաչներն իրենց դեմ քվեարկելը բացատրում էին այն պատճառաբանությամբ, որ Ֆոն դեր Լեյենի ծրագրի բովանդակությունը բավականաչափ «կանաչ» չէ:

Ինչ վերաբերում է ԵՄ արտաքին քաղաքականությանը, Ֆոն դեր Լեյենը հայտարարել է, որ ցանկանում է վերացնել արտաքին քաղաքականության վերաբերյալ որոշումների վրա ԵՄ երկրների վետոյի իրավունքը: Նա ավելի կողմնակից է որակյալ մեծամասնության քվեարկությանը[9]՝ պնդելով, որ փոփոխությունն անհրաժեշտ է, որպեսզի ԵՄ-ն կարողանա ունենալ միասնական «եվրոպական հեռախոսահամար» համաշխարհային բեմում՝ համաձայնություն գտնելու վրա ժամանակ ծախսելու փոխարեն: Փոքր պետությունները հակադարձում են այս մեթոդին՝ վախենալով, որ իրենց ձայնը հաշվի չի առնվի այն հարցերում, որոնցում նրանք համաձայն չեն լինի մեծամասնության հետ:

Այնուամենայնիվ, Ֆոն դեր Լեյենը հավաքել է անհրաժեշտ թվով ձայները և նոյեմբերի 1-ից կստանձնի Եվրոպական հանձնաժողովի նախագահի պաշտոնը (ԵՄ-ից Մեծ Բրիտանիայի դուրս գալու վերջնաժամկետի հաջորդ օրը):

Նախքան նրա՝ պաշտոնը ստանձնելը կընտրվեն հանձնակատարները, կհատկացվեն վերջիններիս պորտֆելները, և նրանք բոլորը հաստատող լսումներ կունենան խորհրդարանում:

Հասկանալի է, որ եվրոպական նշանակումներն արտացոլում են նոր քաղաքական դիրքավորումները:

Ֆրանսիայի նախագահ Մակրոնի մտերիմ, հայտնի լիբերալ Շառլզ Միշելը ընտրվել է Եվրոպական խորհրդի նախագահ: Նա կփոխարինի Դոնալդ Տուսկին[10]:

[9] https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/speech_19_4230
[10] https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2019/07/02/european-council-appoints-new-eu-leaders/

Բելգիայի նախկին վարչապետ Միշելի առաջադրումը ցույց է տալիս լիբերալների աճող ազդեցությունը, որն ամրապնդվել է եվրոպական ընտրությունների արդյունքներով՝ ԵԽ-ում նրանց տեղերի զգալի ավելացմամբ:

Եվրոպական խորհուրդը նաև առաջադրեց Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) ղեկավար Քրիստին Լագարդին՝ գլխավորելու Եվրոպական կենտրոնական բանկը, որը կրկին Մակրոնի ընտրությամբ էր:

Եվրոպական խորհուրդը նաև պաշտոնապես առաջադրել է Իսպանիայի արտաքին գործերի նախարար Ջոզեպ Բորրելին՝ որպես ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ: Այս պաշտոնը ներկայումս զբաղեցնում է Ֆեդերիկա Մոգերինին:

72-ամյա սոցիալիստ Բորրելը 2004-2007թթ. եղել է Եվրոպական խորհրդարանի նախագահ, իսկ մինչև 2009թ. եղել է ԵԽ պատգամավոր:

Եվրոպական հարևանության քաղաքականության և ընդլայնման բանակցությունների հանձնակատարի հունգարացի թեկնածու Լասլո Տրոչանյիի մերժումից հետո նոր թեկնածուն ԵՄ-ում Հունգարիայի դեսպան Օլիվեր Վարհեյին է, ով Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանի ընտրությունն է:

Ինչ վերաբերում է Եվրոպական խորհրդարանի մշտական հանձնաժողովներին, ապա ընդհանուր 20 հանձնաժողովից 8-ի նախագահությունը ստանձնեց ԵԺԿ-ն, 4-ինը՝ «Սոցիալիստների և դեմոկրատների պրոգրեսիվ ալյանս»-ը, 3-ինը՝ «Նորափոխել Եվրոպա»-ն, 2-ական հանձնաժողովի նախագահություն ստացան «Կանաչների/Եվրոպայի ազատ ալյանս»-ը և «Եվրոպական պահպանողականներ և ռեֆորմիստներ»-ը, 1 հանձնաժողով բաժին ընկավ «Եվրոպական միացյալ ձախեր/Սկանդինավյան ձախ կանաչներ»-ին:
Առանցքային հանձնաժողովներից մեկի՝ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի (AFET Committee) նախագահ վերընտրվեց գերմանացի Դեյվիդ Մքալլիսթերը[11]:
Մշտական հանձնաժողովների նախագահությունն ըստ կուսակցական խմբերի ներկայացված է 2-րդ գծապատկերում:

[11] http://www.europarl.europa.eu/news/en/headlines/eu-affairs/20190711STO56847/meet-the-new-chairs-of-the-parliamentary-committees

Գծապատկեր 2. 20 մշտական հանձնաժողովների նախագահությունն ըստ կուսակցական խմբերի (անձ)



Այս որոշումները ցույց տվեցին, որ Եվրամիությունում իրական իշխանությունը դեռ գտնվում է իր հիմնական անդամների ձեռքում:

Նշենք նաև, որ դեռևս այս տարվա հունվարին Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը և Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը կնքեցին Ասխենի պայմանագիրը, որը միտված է խթանելու համագործակցությունը անվտանգության, արտաքին քաղաքականության, տնտեսության ոլորտներում[12]: Այս խորհրդանշական քայլն արվեց ի հակադրություն եվրոսկեպտիկների և ազգայնականների տեսակետների՝ առաջ տանելով ինտեգրման ծրագրի գաղափարը: Մերկելը և Մակրոնը փորձեցին ցույց տալ, որ ԵՄ նախագծի հիմնական լոկոմոտիվը դեռևս ուժեղ է, ինչն էլ խիստ քննադատության է ենթարկվում օրեցօր ավելացող և ակտիվացող պոպուլիստական կուսակցությունների կողմից:

Երկու ղեկավարների պնդմամբ ազգայնական շարժումների զարգացման, BREXIT-ի հետևանքների և աշխարհը ցնցող մի շարք գլոբալ մարտահրավերների պայմաններում Գերմանիան և Ֆրանսիան պարտավոր են պատասխանատվություն ստանձնել: Սակայն ֆրանս-գերմանական դաշինքի ակտիվացումն անհանգստացնում

[12] https://m.bundeskanzlerin.de/bkinm-en/news/germany-and-france-conclude-the-treaty-of-aachen-1567186

է ԵՄ մյուս անդամ պետություններին: Նրանք վախենում են, որ Բեռլինն ու Փարիզը ԵՄ թիակերը իրենց ձեռքը կվերցնեն (հատկապես BREXIT-ից հետո):

Մյուս անդամ պետություններից մի քանիսը նույնիսկ ցանկություն ունեն հարավային բլոկ ստեղծելու, որի մեջ գուցե ներգրավվեն նաև արևելյան Եվրոպայի որոշ երկրներ՝ ի հակակշիռ ֆրանս-գերմանական առանցքի: Սակայն այդ երկրների մեծ մասը թե՛ տնտեսապես, թե՛ քաղաքականապես կախվածություն ունի Գերմանիայից, և վերջին նշանակումները հուշում են, որ ֆրանս-գերմանական դաշինքն իր ծանրակշիռ խոսքն է ունենալու ԵՄ ինստիտուտներում:

ԻՆՉՊԵ՞Ս ԿՓՈԽԵՆ ՆՈՐ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ինչպես արդեն նկատեցինք, եվրոպական ընտրությունները հանգեցրին մասնատված օրենսդիր մարմնի և ավելի բարդ խորհրդարանական գործընթացների:

Այժմ, երբ ԵՄ-ն բախվում է չլուծված մարտահրավերների մի ամբողջ շարքի՝ միգրացիայի կառավարում, Brexit-ի փակուղու լուծում, ահաբեկչության դեմ պայքար, եվրագոտու կայունացում, զբաղվածության խթանում և կլիմայական փոփոխությունների աղետի կասեցում, այսքան խայտաբղետ քաղաքական թատերաբեմով, վստահաբար, հեշտ չի լինելու:

Պոպուլիզմի և եվրոսկեպտիցիզմի աճող ալիքին զուգահեռ՝ առկա ժողովրդավարական համակարգը մետամորֆոզի է ենթարկվում: Ավելի մասնատված խորհրդարանը նշանակում է ավելի դանդաղ օրենսդրական գործընթաց, մեծանում են նաև Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի միջև բախման շանսերը, որի հաստատումն անհրաժեշտ է ԵՄ օրենքներն ընդունելու համար: Հետևաբար կարևորագույն հարցն այն է, թե արդյոք քաղաքական ուժերը խրախուսո՞ւմ են ԵՄ ժողովրդավարական բանավեճի բնույթի որակական փոփոխությունը և քաղաքական նորացման նորմատիվ մոտեցումները:

Հարց է առաջանում՝ ԵԽ քաղաքական «խաղացողներից» յուրաքանչյուրն ինչպիսի՞ գործելաոճ կորդեգրի:

Ինչպես տեսանք, այս գումարմանը լիբերալներն ու կանաչները հնարավորություն ունեն ավելի մեծ դերակատարում ունենալու ԵՄ քաղաքականության ձևավորման գործում: Կանաչներն աջակցում են ածխաթթու գազի արտանետումները պակասեցնելու քաղաքականությանը, ինչպես նաև պայքարում են աշխատողների իրավունքների բարելավման համար: Այս

նախաձեռնությունները կարող են խնդրահարույց դառնալ ոչ ԵՄ անդամ երկրների հետ ազատ առևտրի մասին համաձայնագրերի շուրջ հետագա բանակցություններում, քանի որ հնարավոր է ճնշում գործադրվի Եվրոպական հանձնաժողովի վրա՝ գործարքների մեջ ներառելու նման դրույթներ:

Եվրոսկեպտիկները միանշանակ կփորձեն հնարավորինս շատ խառնաշփոթ ստեղծել՝ խաղալու իրենց ներքին լսարանի առջև: Այս ամենը Եվրոպական խորհրդարանը կդարձնի ավելի քիչ կանխատեսելի դերակատար ԵՄ քաղաքականության մեջ:

Սակայն, եթե նրանք փորձեն խնդիրներ ստեղծել կարևոր, առաջնային որոշումները խոչընդոտելու համար, մյուս բոլոր կուսակցությունները ստիպված կլինեն միավորվել՝ պահպանելու ԵՄ-ի բնականոն գործունեությունը: Կարևոր է հաշվի առնել, որ ԵԽ-ի պարալիզացման դեպքում անդամ պետությունները կսկսեն շրջանցել խորհրդարանը՝ միջկառավարական գործարքներ կնքելու միջոցով:

Շատերը կարծում են, որ որոշ ազգայնական կուսակցություններ կկործանեն ԵՄ-ն, մինչդեռ այդ կուսակցությունները պնդում են, որ իրենք դեմ չեն ԵՄ-ին որպես այդպիսին, բայց ցանկանում են բարեփոխել միության գործելակերպը: Այժմ խորհրդարանում ավելի ամրապնդված դիրք ունենալով՝ ազգայնականները պետք է ցույց տան, որ իրենք իսկապես կառուցողական և գործնական գաղափարներ ունեն եվրոպական մակարդակում, այլ ոչ թե պարզապես առաջնահերթությունը տալիս են ազգային շահերին, և «այլընտրանքային տարբերակների» մասին խոսակցությունները պարզապես պատրվակ են խաթարելու եվրոպական համագործակցության հիմքերը:

Իսկ ահա եվրոպամետ կուսակցությունների համար ժամանակի հրամայական է ընտրությունների արդյունքները ավելի խորությամբ վերլուծելը և իրենց կողմից քաղաքականության մշակման ուղիները բարելավելը՝ անդրադառնալով նաև այն խնդիրներին ու մտահոգություններին, որոնք հիմնական պատճառն են դարձել ամբոխավարական ուժերի նմանօրինակ աճի համար:

Մոտ ժամանակներս ավելի պարզ կլինի, թե արդյո՞ք ԵԽ-ն կվերածվի եվրոպամետների և եվրոսկեպտիկների միջև պարզունակ քննարկման, թե՞ ինտեգրման գործընթացները բարելավելու կամ դրա նոր, առավել արդյունավետ մոդելներ առաջարկելու հարթակ կդառնա:

Հետևաբար, «նոր» Եվրոպան կարող է նմանվել անվերջ ձգվող քարոզարշավի: Եվրոպամետ կուսակցություններին անհրաժեշտ է ավելի շատ ուշադրություն դարձնել պոպուլիստների բարձրաձայնած խնդիրներին, իսկ պոպուլիստներին ցույց տալ, որ ԵՄ-ի բարեփոխման իսկապես իրագործելի ծրագրեր ունեն:

Պարադոքսը հետևյալն է՝ թեև շատերը վախենում էին, որ ընտրությունները կարող են գլխիվայր փոխել ԵՄ քաղաքականությունը, երկարաժամկետ կանխատեսմամբ դրանք չեն ցնցելու հիմնական, անկյունաքարային քաղաքական օրինաչափությունները:

Այնուամենայնիվ, չի կարելի հերքել, որ ԵՄ մակարդակում խորհրդարանական ժողովրդավարության մեջ երկար ժամանակ կառուցվածքային դեֆիցիտ է նկատվում: Եվ այս իրավիճակի կանխարգելման համար հարկավոր կլինի փոխել ԵՄ քաղաքականության մշակման ձևը, այն դարձնել ավելի բազմազան, քննարկային, այլ ոչ թե հետևել բևեռացված՝ եվրոպամետ և հակաեվրոպական հռետորաբանությանը: ԵՄ-ն պետք է դառնա ավելի տեսանելի, արդյունավետ և պատասխանատու քաղաքացիների կարիքների նկատմամբ՝ փոխելով գործելակերպը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*